Yaziχli Lusig sargawakni aņgaysen, neçä sarnasaņ, bir "Atamiz, ki köktäsen" bilä (58v) “Читая, всякий раз помяни грешного диакона Лусига одним “Отченашем””.

Men, Lusig sargawak, yazdim, sarnagan yazučı bilä aņilgay K'risdosnuņ alnina (119v) “Написал я, диакон Лусиг, да будут помянуты читающий вместе с писцом перед Христом”.

Yazdirgan sarnagan bilä yazučı bilä birlängäy, K'risdosnuņ yarχu künninä aņilgaylar bir yerdä (186v) “Да соединятся читающий вместе с писцом и да будут помянуты вместе перед Христом в судный день”.

В венецианской рукописи № 359, 1581 года, вероятно, убедившись, что новая редакция перевода оказалась в целом удачной, диакон Лусиг решается все же заявить о своем авторстве, но не прямо, а скромно сетуя, что перевод дался ему с большим трудом и, мол, это все, что было в наших силах. Дословно:

Yalbarip xolarman sizdän, xardaşlar, ki neçä bu bitikni sarnasañiz, aňgaysiz men yazıxli Lusig sargawakni bir hajr mer bilä, da Krisdos sizni dä aňgay kendiniñ ekinçi kelganinä, da boşatkay yazıxlarıñizga, da arzani etkäy köktagi xanlıxka meñi meñilik amen (38v-39) "Умоляю и прошу вас, братья, читая эту книгу, каждый раз вспомните меня, грешного диакона Лусига, одним "Отчешем", и Христос тоже вспомнит вас в час своего второго пришествия, и простит вам ваши грехи, и удостоит вас царствия небесного навеки веков, аминь".

Köp xiyin bilä çixardiñ xipçañ tilinä ermeni saymosnu, yamanlamañiz, zerä xudrätimiz bunça edi, artixin Krisdos tügällägäy (124r) "С большими трудностями мы перевели армянскую Псалтырь на кыпчакский язык; не хулите, ибо наших сил хватило только на это, а остальное пусть восполнит Христос".

Сопоставив колофоны, З. Дубинска в свое время предположила, что было два "индивидуальных" кыпчакских перевода: "анонимный" — рукопись 3546/III, 1575 года, и диакона Лусига — Вена, Арм. 13, 1580 года [Dubinśka 1961: 212]. Но мы склонны заключить, что и переводчиком, и редактором последующих версий был один человек — Лусиг, достигший к 1580 году выдающихся успехов в изучении палеографии, Библии, древнеармянского, еврейского, греческого, латинского, польского языков и в мастерстве перевода и получивший к тому времени духовный сан саргавака — диакона.

Многие псалмы, молитвы, песни и гимны, включенные в Псалтырь, имеются также в армяно-кыпчакских молитвенниках. Очень часто переписчики не ограничивались буквальным копированием, а старались улучшить и исправить перевод. Иногда при этом возникали совершенно новые переводы. В будущем мы планируем издать варианты из других версий Псалтыри, а отдельным томом — тексты из молитвенников во всех зафиксированных вариантах.

В настоящем издании публикуются две наиболее ранние версии армянско-кыпчакской Псалтыри по рукописям 3546/III и Арм. 13. Обе они двуязычны, тогда как остальные списки уже не содержат оригинального армянского текста.

Армянские части обеих версий между собой текстуально не различаются, если не принимать во внимание некоторых особенностей орфографии, меньшего количества сокращений и наличия просодических помет во второй версии. Обе на соответствующих местах содержат песни, молитвы и гимны из разных книг Ветхого Завета. Однако рукопись 1580 года, по сравнению с предыдущей, включает также псалом 151, молитвы Азарии и трех юношей, некоторые тексты из Нового Завета, а также новые христианские молитвы, в том числе армян-

ских святых отцов, которых в первой версии нет. В целом армянский текст идентичен с каноническим сводным текстом И. Зограбяна.

Третий материал, который мы здесь публикуем,— это глоссарий к Псалтыри по рукописи № 2267 Института древних рукописей имени Месропа Маштоца (Матенадаран, Ереван, Армения), написанный (начатый) 12 апреля 1581 года тем же диаконом Лусигом, о чем свидетельствуют армянская и кыпчакская записи на стр. 43r. Примечательно, что 1581 годом датируется и рукопись № 359 из Венеции. Вероятно, назначение глоссария, соотношение между версиями и другие вопросы, связанные с авторством, прояснятся после его сличения с рукописью № 359 и более поздними кыпчакскими списками, которые пока нам не были доступны.

Использованные источники

I. Краков, Музей Чарторыхских, 3546/III. Псалтырь и другие гимны, песни и молитвы из Ветхого и Нового Завета. Написал аноним.— Львов, 1575.— 258 + 2 нумерованных листа (64a и 91a). Язык: армянский и кыпчакский, по стихам. Письмо: армянский болоргир.

II. Вена, Австрийская национальная библиотека, Агт. 13. Псалтырь и другие гимны, песни и молитвы из Ветхого и Нового Завета. Написал диакон Лусиг.— Львов, 1580.— 2 нумерованных листа + 210 л. + 1 чистый. Язык: армянский и кыпчакский, по стихам. Письмо: армянский болоргир.

Институт древних рукописей имени Месропа Маштоца (Матенадаран), Ереван, № 2267. Сборник диакона Лусига.— Львов, 1581-1598.— 16x20,5 см. 189 лл. Язык: армянский и кыпчакский. Письмо: армянский болоргир, нотргир.

Сборник включает: парадигмы армянских слов, преимущественно глаголов, с поморфемным переводом на кыпчакский (лл. 30r–42v); армянско-кыпчакский глоссарий к Псалтыри (лл. 43r–52v); фрагмент из Евангелия о поклонении мудрецов и пастухов новорожденному Иисусу (лл. 112r–112v); заметка о Евангелии (лл. 113r–113v); песня о воскресении Христа (лл. 131v, 129r); поучение вардапета Ванагана о всенощном бдении, посте и разговении (л. 131r); рецепт бальзама долголетия (л. 130r).

Колофоны:

Պատմութիւն Հայի և իւր չափս լեզուի. մեկնեալ լուսիկ (43r): "История, на армянском на кыпчакском языках, истолковал Лусиг".

Թիւ ռլ սարիկ Ժ. Չեռա՞մ լուսիկ սարկաւազի. խօրս աշրրա լուսիկ. dijakonus armenus (43r): "12 апреля 1030/1581 года. Написал диакон Лусиг. Написано рукой армянского диакона Лусига".

Сообщим также те скудные сведения о рукописи № 359 из Венеции, которыми мы располагаем.

Венеция, Библиотека Конгрегации мхитаристов, № 359. Псалтырь и другие гимны, песни и молитвы из Ветхого и Нового Завета. Перевел, написал и иллюстрировал диакон Лусиг.— Львов, 1581.— 316 л. Язык: армяно-кыпчакский. Письмо: армянский болоргир.


Особенности письма

Армянское письмо украинскими армянами использовалось в его западном варианте. Для правильного чтения рекомендуем воспользоваться приводимой ниже таблицей транслитерации и транскрипции.

В ходе сравнительно-исторического исследования армяно-кыпчакского языка мы давно убедились, что для чтения кыпчакских текстов традиционная арменологическая транслитерация, а также основанная на ней компромиссная транслитерация с элементами транскрипции дают мало пользы, ибо не только не раскрывают специфики кыпчакского вокализма, но и существенно затушевывают особенности консонантизма.

Соотношение между армяно-кыпчакской графикой и фонетикой подробно раскрыто в наших предыдущих работах [Гаркавец 1987;

1988 и др.], которыми мы и предлагаем воспользоваться нашим благодарным читателям. Поэтому в настоящем издании кыпчакские тексты мы приводим в оригинальной армянской графике и в тюркологической транскрипции, уточняя по мере надобности прежние прочтения.



*Armenian church in
Kamenets-Podolsky.*

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆԸ
ՈՐՊԷՍ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԾՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ
1700 ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻԻ
27-28 ապրիլի 301 թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

XVI դարի գրավոր հուշարձանի հիմնական արժեքը, որին նվիրված է սույն աշխատությունը, կայանում է նրանում, որ Լվովարենակ Լուսիգ սարկավագը շարադրում է Սուրբ Գրքի կարևորագույն մասը՝ Սաղմոսագիրքը, ինչպես գրաբարով, այնպես էլ խփչախերեն լեզվով, ընդորում խփչախական թարգմանությունը կազմված է հայկական գրով:

Պետք է նշել, որ հայապատ խփչախերեն տեքստերը մեկուկես դարի ընթացքում, բավականին փարածված էին XVI-XVII դդ. Ուկրաինայում (նախ և առաջ՝ Լվովում, Կամենեց-Պոդոլսկում և այլն., ընդհանուր առմամբ մոտ 70 հայկական գաղութներում), Լեհաստանում, Ռուսիանիայում, Մոլդովայում, Ղրիմում և Թուրքիայում: Այնուամենայնիվ, հայապատ խփչախերեն լեզուն առավել լայն փարածում էր ստացել ժամանակակից Ուկրաինայի այն փարածքում, որը մտնում էր Ռեչ Պոսպոլիտայի կազմի մեջ: Վերջին հանգամանքը պայմանավորված էր այս փարածաշրջանի հայկական գաղթի յուրահատկություններով:

Համաձայն բազմաթիվ աղբյուրների, հայկական գաղթի առաջին ալիքը (300-400 ընտանիք) դեպի Աջափնյա և Արևմտյան Ուկրաինա տեղի է ունեցել Ղրիմից, Ներքին Դոնից և Բեսարաբիայից XIV դարում և բաղկացած էր, հիմնականում, հայ-խփչախախոսներից: Գտնվելով խփչախերենի միջավայրում և նրանց լծի փակ, հայերը ենթարկվում են ասիմիլացիայի՝ շարք հաճախ մոռանալով իրենց մայրենի լեզուն: Ուկրաինայի նշված հիմնական գաղութների բնակիչները հայ էին իրենց անվանում, սակայն խոսում, գրում և աղոթում էին, հիմնականում, խփչախերեն լեզվով:

Հետագա գաղթի ալիքների համար բնորոշ էր վերահայացման գործընթացը՝ հայալեզու ներգաղթյալների գերակշռության պարճառով, որոնց համար խփչախերեն լեզուն արդեն այդքան էլ հարազատ չէր: Սակայն, մի շարք հանգամանքների պարճառով, վերահայացումը շուրջ զիջեց իր դիրքերը նոր միություններին՝ հայ գաղութներին համակում է սլավոնիզացիան և մասնավորապես, պոլոնիզացիան:

Հայապատ խփչախերեն լեզվով Սուրբ Գրքի, դարա-ակերային և այլ տեքստերի գրության փորձը կատարվում է Ուկրաինա տեղափոխված

հայերի առաջին ալիքի ներգաղթյալների շնորհիվ: XVII դարի երկրորդ կեսին, հարկապես՝ Լվովի և Կամենեցկի հայերի կողմից Հռոմակաթովիկական Եկեղեցու հետ ունիա ընդունելուց հետո, նման փորձը կորցրեց իր այժմեականությունը՝ հայկական գաղութներում սկսեց գերակշռել լեհերեն լեզուն:

Պետք է նաև մոռանալ, որ XI-XIV դարերում հայերը իրենց Հայրենիքում նույնպես սերտորեն շփվում էին խփչախսների հետ: Հափուկ հեփաքրքրություն է ներկայացնում այն փաստը, որ խփչախսներից շատերը, որոնք բնակվում էին Հայաստանի տարածքում, ընդունում էին հայ-ուղղափառ քրիստոնեություն: Գ. Ալիշանի, Ա. Աճարյանի և Է. Խուրշուդյանի [Хуршудян, Муканова 1999] կողմից հեփազուրված վիճագիր հուշարձանների փվյալների համաձայն, Շիրակի մարզի Արթիկի շրջանի ժամանակակից հայկական ավան Հառիճը (որը գտնվում է Երևանից 110 կմ. հեռավորության վրա) նախկինում անվանվել է Խփչախ, իսկ XII դարի սկզբից այդ ավանում գոյություն ունեցող վանքը անվանում է Խփչախավանք: Այդ վանքի հայերենով գրված արձանագրությունում, որը թվագրվում է 1304թ. կարդում ենք. «յաշխարհակալութեան ելզանայ Ղան Ղազանին ես Ելխութլու, որդի Չաղանին, ես իմ որդի Աբաշես ես իմ խաթունս Խողլու միաբանեցաք ի սուրբ Աստուածածինս ես գմեր բաժին գանձով շինած ձիթահանք փվաք եկեղեցուս... ով դաւի անէ, յԱստուծոյ եւ ի փեղամբարայ նալաթ է, կարարիցք արինին՝ յԱստուծոյ, ի թուին ԶԾԳ (1304թ.)»:

Հայ-խփչախախոսների առավել մեծ գաղութները տեղաբաշխված էին ՌԲկրահնայի Լվով (ոչ պակաս քան 60 ընտանիք) և Կամենեց-Պոդոլսկի (մոտ 300 ընտանիք) քաղաքներում: Հայ եկեղիցիները գործում էին Կի և ում, Լուցկում, Վլադիմիրում, ինչպես նաև ՌԲկրահնայի տարածքից դուրս՝ Ռումինիայի Սուչավա և Սիրետ քաղաքներում: Այդ գաղութների բնակիչները դավանում էին Հայ Եկեղեցու կրոնը: 1363 թվականից Լվովում գործում էր հայ եպիսկոպոսի ամբիոնը, իսկ 1383 թ. Կամենեց-Պոդոլսկում հիմք էր դրվել Սուրբ Նիկողոսի եկեղեցին: Եկեղեցու շինարարությունը ֆինանսավորվում էր հայ առևտրական Սինան Ղութութեյի կողմից, որը խփչախական ազգանուն ուներ: Եկեղեցու հիմնաքարը և այսօր կարելի է տեսնել՝ 1577 թ. վերակառուցված Սուրբ Նիկողոսի եկեղեցու պարի մեջ:

Սակայն, XVII դարից սկսած ՌԲկրահնայի հայկական գաղութները, բնիկ բնակչության մշակութային ընդարձակման և ազդեցության հետևանքով, աստիճանաբար սկսում են նահանջել ավանդական դավանանքից: 1627 թ. ապրիլի 26-ին / մայիսի 6-ին Լվովաբնակ հայերը համաձայնագիր են ստորագրում եպիսկոպոս Նիկոլ Թորոսովիչի հետ, որի համաձայն նրանք ճանաչում են իրեն որպես հոգևոր պետ (իերարխ) և դաշինք են հռչակում Հռոմակաթովիկական Եկեղեցու հետ: Կամենեց-Պոդոլսկի հայերը ունիան ընդունում են ավելի ուշ՝ այսօր, Սուրբ

Նիկողոս եկեղեցում, կաթոլիկական ծիսակատարությամբ առաջին արարողությունը կատարվել է 1666թ. հոկտեմբերի 1-ին:

Պեպք է նշել, որ Լվովի և Կամենեցկի գաղութները, սկսած 1344 թ., օգտվում էին ինքնակառավարությունից՝ լիտվական նախարարներից և լեհ թագավորներից սրացված բազմակի արտոնությունների հիման վրա: 1519 թ. Միգիզմունդ թագավորը Լվովաբնակ հայերի համար իր որոշմամբ հաստատում է XII-XIII դդ. Մխիթար Գոշի կողմից կազմված «Դարաստանագիրք»-ը: «Դարաստանագիրք»-ը թարգմանվում է խիչախերեն լեզվով և խիչախական մեկնակերպով օգտագործվում է Լվովում և Կամենցում:

Կամենցում հայերը տիրում էին քաղաքի երրորդ մասը, որտեղ տեղաբաշխվում էին ռաբուշան, շուկան, եկեղեցին, խանութները, աղքատների ապաստարանը, բաղնիքներն ու մունիցիպալ այլ օբյեկտները: Կամենեցկի հայերը վարձակալում էին ջրաղացներ, գյուղեր, մեղվանոցներ, մաքսատներ, ունեին արհեստավորական արտադրամասեր, քաղաքացիական և հոգևոր ինքնակառավարման մարմիններ, միաբանություններ՝ նեռարյալ պատանիների միաբանությունը, դպրոցներ և այլն:

Հայկական գաղութների անկախությունը, նախևառաջ, ապահովում էին հայ առևտրականները: Օրինակ՝ ապրանքների ներմուծման և արտահանման համար մաքսային փոստերը մուծած Կամենեցկի հայերի ցուցակում, որը թվագրվում է 1616 թ. սեպտեմբերի 30-ի / հոկտեմբերի 10-ով, հիշատակվում է 43 անձ: Թուրքիայից հայ արևարականների կողմից արվում էին ապրանքների որոշ խոշոր մատակարարումներ, ընդհանուր առմամբ, հասնելով 12-15 հազար տալերի: 1685 թ. Լվովում 14 հարուստ խանութներից 10-ը և 17՝ չափագծով միջին խանութներից 13-ը պատկանում էին հայերին:

Հայ գաղութները թողել են իրենցից հեքո հարուստ գրավոր ժառանգություն: 1521-1669 թթ. ստեղծված և մինչ այսօր հայ-խիչախերեն լեզվով պահպանվել է 112 գրավոր հուշարձան (մոտ 25-30 հազար էջ): Այդ գաղութների գրավոր ժառանգությունը այլ լեզուներով (հայերեն, լեհերեն, ուկրաիներեն և այլն) ընդգրկում են 1519-ից մինչև – 1786 թթ. ընկած պատմական հատվածը:

Հայ-խիչախական գրավոր հուշարձանները պահպանվում են Կիևում (Կամենեց-Պոդոլսկի հայ դպարանի 28 ակտային գրքեր – Անդրեյ Թորոսովիչի «Փիլիսոփայական քարի խորհուրդները» ստեղծագործությունը), Լվովում (1 հայ-խիչախական բառարան և 26 առանձին փաստաթղթեր), Երևանում (3 քրիստոնեական և բանասիրական բովանդակությամբ խիչախական ձեռագրեր և 6 հայկական ձեռագրեր՝ խիչախերեն առանձին գրառումներով), Սանկտ-Պետերբուրգում (հայ-խիչախական բառարան, Սրբերի Վարքագրությունը և Մաղմոսագիրքը), Վիենայում (3 հայ-խիչախական բառարաններ և 13 ակտային և քրիստոնեական բովանդակությամբ ձեռագրեր և «Դարաստանագիրք», ակտային գրքեր, Մաղմոսագրքեր, աղոթագրքեր, Անտոն

վարդապետի քարոզների 3 գիրք), Վենետիկում (10 ձեռագիր-Սաղմոսագրքեր, աղոթագրքեր, և «Դաբասսարանագիրք», ակրային գրքեր, ժամանակագրություն), Կրակովում, Վարշավայում և Վրոցլավում (10 ձեռագիր՝ ներառյալ Սաղմոսագիրք, աղոթագիրք, օրացույց, 1528-1604 թթ. և «Դաբասսարանագիրք»), Փարիզում (4 ձեռագիր – Սաղմոսագիրք, օրացույց, և «Դաբասսարանագիրք» և Ակիր Իմաստնագույնի մասին ժամանակագրությունն ու ավանդագրույցը ներառող ժողովածու), Գերայում (նախկին Արմենոպոլիս, Սամոշուվար) – Ռումինիա (Սաղմոսագիրք) և Լեյդենում՝ Հոլանդիա (տպագրված աղոթագիրք):

1618 թ. խիչախերեն լեզվով հրատարակված Լեյդենի աղոթագիրքը, ամենայն հավանականությամբ, աշխարհում առաջին տպագրված գիրքն է համարվում է՝ գրված թյուրքական լեզուներից մեկով:

Ուկրաինայում, Հայաստանում և Ռուսաստանում պահպանվող գրավոր հուշարձանները (67 ձեռագիր) նկարագրված են՝ 1993թ. Կիևում ուկրաիներեն լեզվով Ա.Ն. Գարկավեցի կողմից հրատարակված գրացուցակում: Բազմակի նկարագրությունները լրացված են տեքստերով՝ կից գիրական բացատրություններով: Ինչ վերաբերում է այլ երկրներում պահպանվող գրավոր մնացած հուշարձաններին, ապա նրանք համակարգված չեն: Այս բոլոր հուշարձանները, ինչպես և սույն հրատարակման մեջ ներկայացված XVI դարով թվագրված Սաղմոսագրքի երկու մեկնակերպերը, հետաքրքիր են փարբեր տեսանկյուններից:

Նախ և առաջ, բերենք որոշ տեղեկություններ այն լեզուների մասին, որոնց վրա գրված է այս բացառիկ գրավոր հուշարձանը:

Հայ-խիչախական լեզուն իր ծագումով և կառուցվածքով մոտ է այնպիսի ժամանակակից թյուրքական լեզուներին, ինչպիսիք են՝ դրիմաթարերենը, ուռումերենը, կարաիմերենը, կրիմչակերենը, կարաչայաբալկարերենը, կումիկերենը, թաթարերենը, դագախերենը, նոդայերենը, դրդգերենը, ուզբեկերենը և այլն: Փաստորեն, դա այն լեզուն է, որով խոսում էին XI-XIV դդ. Հարավ-Արևելյան Եվրոպայի – Հունգարիայի խիչախ-կուման-պոլովցիները և որը արձանագրված է «Codex Cumanicus» հուշարձանում: Նա շատ մոտ է նաև XIV-XVII դդ. Ոսկե Հորդայի և Մանյուկական Եգիպտոսի գրավոր հուշարձանների խիչախ-օղուզական լեզվին: Միևնույն ժամանակ, զարմանալի չէ, որ հայտարառ խիչախերենը փոխ է առել հայերենից մեծ թվով բառեր, որոնք կապված են հայկական կրոնական ոլորտի հետ: Ահա, դրանցից մի քանիսը՝ *amen eyici* «ամեն», *anabad* «անապատ», *artar* «արդար», *dadzar* «տաճար», *hnazant* «հնազանդ», *kerezman* «գերեզման», *xač* «խաչ», *xonarh* «խոնարհ», *jišadag* «հիշատակ», *orēnk*՝ «օրենք», *saymos* «սաղմոս», *sk'ančeli* «սքանչելի», *surp* «սուրբ», *žarank* «ժառանգ», *žoyovurt* «ժողովուրդ», *Asduadz* «Աստված», *Asduadzadzin* «Աստվածածին», *Apisoyom* «Աբիսոնոմ», *Jagop* «Հակոբ», *Tavit*՝ «Դավիթ», *K'ananaçi* «Քանանացիներ», *kerovpe* «Քերովբե», *k'risdos* «Քրիստոս», *Movsēs* «Մովսես» և այլն:

Սաղմոսագրքի հայկական բնագիրը գրված է գրաբարով: Հուշարձանի փեքսորը գրված է այսպես կոչված «բոլորագրով», որի փոքրապատերը (ի տարբերություն կլոր մեծապատերի)՝ հակառակ վերջինիս անվանմանը, կազմվում են համարյա միայն ուղիղ հարվածների զուգակցումով: Տառերը, սովորաբար, գրվում են աջ թեկությունով, չնայած երբեմն պարահում է և ուղղահայաց սռնակով գրագրությունը: Հայկական փեքսորում՝ խոսքերի խմբերի միջև իսկ հերագայում և առանձին խոսքերի միջև հաճախակի բացումներ չկան: Բոլոր հարուկ անունները, տեղանունները ինչպես նաև «Տեր», «Աստված» խոսքերը, գրվում են փոքրապատով: Նկարվում է նաև սրացական դերանունների միավորյալ գրագրության միտումը (օրինակ՝ *յանձնիւ = յանձն իւ*) և այլն:

Մեր կարծիքով, փեքսորի կեդրոնությունը լի է անճշտություններով, և այդ պատճառով՝ հայկական բնագրի վերարտադրման ժամանակ մենք դեկավարվում էինք Յոհաննու Զոհրապեանի Աստվածաշնչի կանոնական փեքսորում ընդունված կեդրոնությունով (*Աստուծաշունչ մարեան Հին և Նոր Կրակարանաց... Յաշխարասիրութենէ Յոհաննու Զոհրապեան վարդապետի... Ի Վենեպիկ, 1805; apud: Աստուծաշունչ Մարեան Հին և Նոր Կրակարանաց Ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց Մերոց Համեմարութեամբ Եբրայական և Յունական բնագրաց, Վիեննա Ամերիկեան Ընկերութիւն, Գրոց Սրբոց 1929; Աստուծաշունչ Մարեան Հին և Նոր Կրակարանաց, Հայաստանի Աստուծաշնչային Ընկերություն, 1997*):

Տեքստում արձանագրված են՝ արտասանության հավելյալ յուրահարկությունները նշանակող, ծագումով հունական, վանկաչափության նշաններ: Նման նշանները փասից ավելի են:

Սաղմոսագրքի փեքստում արձանագրված են հապավումների մի զգալի քանակ, ինչպիսիք են՝ *տր̄* «Տեր», *այ̄* «Աստված», *յւ̄* «Հիսուս», *քւ̄* «Քրիստոս», *սր̄* «Սուրբ», *իւլ̄* «Իսրայել», *եղւ̄* «զերուսաղեմ», *յր̄* «երկիր» և այլն: Կրճարվում են նաև «թյուն», «թեան», «թեամբ» ավարտվող անունների վերջավորությունները: Ըստ հեղափոխողների, հապավումների կիրառումը նպատակ ուներ ոչ թե փնտեսել գրանյութը, այլ՝ արագացնել գրագրության գործընթացը: Հապավումը ընկալվում էր որպես ուղղագրականության բնականոն մասը: Հայերը, հետևյալ սեմական և հունական այբենարանների համար հնուց ի վեր ընդունված սկզբունքներին, փալիս էին հայկական տառերին թվային նշաններ: Հայկական այբենարանի 36 նիշերը կազմում էին 4 շարք՝ յուրաքանչյուրում 9 տառ: Առաջին շարքը նշանակում էր միավորներ, երկրորդը՝ փասնորդականներ, երրորդը՝ հարյուրականներ, չորրորդը՝ հազարավորներ: Թվականների ձևով տառերի օգտագործումը նշանակվում էր փոփոխություններով:

Տեքստում նգարվում են բազմակի ուղղագրական և կեդրոնական սխալներ, որոնք գրչի վրիպակների կամ սխալների հետևանքներ են (*lapsus calami*): Այդպես, գրիչը շփոթում է հարաբերական *որ* (եզ. թիվ)

նախադրությունը *ոյթ* ի (հոգն.թ.) հետ, *թո* (ուղղ. հոլ., եզ. թ.) ստացական դերանունը *թով*-ի (գործ. հոլ.) – *թում*-ի (տր. հոլ.) հետ; *ամբարշտություն* = *ամպարշտություն*, (*մթ* = *մպ* – գրչի սխալն է), *անբիծ* = *ամբիծ* (*ան* = *ամ*), *վայելչություն* = *վայելչություն* (*լչ* = *լջ*): Շատ դեպքերում բաց է թողված (*թ*) հոգնակիակերպ մասնիկը: Բոլոր սխալները մեր կողմից նշված են փեքստում: Սակայն նրանց առկայությունը կարող է բարբառային ծագում նաևունենալ, ինչը դեռ առաջիկայում պետք է պարզաբանել:

Ինչ վերաբերում է Սաղմոսագրքի կառուցվածքին, ապա նա ներկայացված է երկու սյունակով, որտեղ յուրաքանչյուր հայկական փեքստին ձուգահեր հետևում է հայ-խաչախերեն թարգմանությունը: Հավելյալ նշումները, համարակալումը, ինչպես նաև փեքստի ուղղումները, դուրս են բերված եզրերից (որոշ ուղղումներ կարարված են անմիջապես փեքստում): Կրոն փակագծերում փրված են փեղեր, որոնք հանդիպում են Զոհրապեանի փեքստում եւ որոնք փարբերվում են Լուսիգ Սարկավագի ձեռագրերից; քառակուսի փակագծերում փրվում են խոսքերի եւ բառակապակցությունների վերականգնված ձևերը՝ ըստ Զոհրապեանի Աստուածաշնչային փեքստի և այլ ձեռագրերի:

Տեքստում պատահում են գրադրվագներ, գեղարվեստական սկզբնաբառեր, լուսանցանցումներ, էջի և սյունակների երիզումներ և այլն:

Լուսիգ Սարկավագի Սաղմոսագրքի փեքստի համեմատումը Յոհաննո Զոհրապեանի Աստվածաշնչի հետ ցույց տվեց, որ բովանդակությամբ մեր Սաղմոսները քիչ են փարբերվում, ընդորում Սաղմոսագրքի այլ մասերը հեռու են բնագրից, ինչի մասին վկայում են մեր զանգվածային լրացումներն ու ծանոթագրությունները:

Մինչ այսօր բացահայտված է 5 խաչախական Սաղմոսագիրք՝ Կրակովի Չարտորիսկի թանգարանում – Լեհաստան (3546/III), Վիենայի Ավստրիական Ազգային Գրադարանում – Ավստրիա (Arm.13), և երեքը՝ Վենետիկի Մխիթարեանների Միաբանության գրադարանում – Իտալիա (NN 11, 359, 1817).

3546/III ձեռագրի չորս կոլոֆոնների (հավելագրերի) հեղինակը, ցուցաբերելով աստվածավախ համեստություն, չի անվանում իրեն և իր մասին խոսում է երրորդ դեմքով՝ «գրիչ», ընդորում պատվիրատուի մասին այստեղ գրված է հստակ և պարզ՝ երեսփոխան, պարոն Ստեփան, Ղազարոսի որդի, այսինքն համայնքի առաջնորդ, համանախագահ: Ընդհանուր առմամբ, հավելագրերը հանդիսանում են որպես այդ ժամանակի ոճի կանոններին համապատասխանող յուրահատուկ գրական ստեղծագործություն: Գրիչը, անցնելով աշխատանքի, պետք է լցված լիներ հնագանդությամբ և անձնական ոչնչության գիտակցությամբ: Ահա այդ կոլոֆոնները կամ հավելագրումները:

3546/III ձեռագրի խաչախական կոլոֆոնները

Yazdirgan sarnagan bilä birlängäylär yazučı bilä da aņilgaylar Tejri alnina meji uçmaçına, amen. T'vaganniņ 1024 (26v)

«Թող միանանան գիր հանձնարարողը և ընթերցողը գրչի հետ միասին և թող Աստուծու մոտ (նրանք) հիշատակվեն հավերժ դրախարում, ամեն: 1575 թիվ»:

Yazdirgan da sarnagan birlängäylär yazučï bilä da aňilgaylar Jisus K'risdoska eyäläri alarniň, amen, meňi uçmaχina, amen eyiçi (59r) «Թող միանան գիր հանձնարարողը և ընթերցողը գրչի հետ միասին և թող հիշատակվեն Տեր Հիսուս Քրիստոսի կողմից, ամեն, հավերժ դրախարում, ամեն, ի սեր Աստուծո: 1575 թիվ»:

Ermeni t'vagannïň 1024-inä, latin t'vagannïň 1575-inä, frank ayina yulistä tügälländi bu saymosaran, Il'aχ ulusuna, Ilov sähä-rinä. Xoltχasina pan Lazar oyluna pan Stepanos erespoχanga. Sayliχ bilä meňärgäy. Amen (122r) «Ավարտված է այս Սաղմոսագիրքը Լեհաստանում, Լվով քաղաքում, 1204 թվականին հայկական թվարկության (համաձայն), 1575 թվականին լատինական թվարկության (համաձայն), եվրոպական ոճով հուլիս ամսին, ամեն: 1575 թիվ: Երեսփոխան, Ղազարոսի որդի, պարոն Ստեփանի համար, իր խնդրանքով: Հավերժ առողջություն: Ամեն»:

Yazdirgan sarnagan bilä birlängäylär yazučï blä da aňilgaylar Teňri alnina meňi uçmaχina, amen. Tvagan 1029 (224r) «Թող միանանան գիր հանձնարարողը և կարդացողը գրչի հետ միասին և թող Աստուծու մոտ հիշատակվեն հավերժ դրախարում, ամեն: 1580 թիվ»:

Arm. 13 ձեռագրի նույնանման կոլոֆոններում «գրչի, դպիրի» դերում արդեն հանդես է գալիս կոնկրետ անձնավորություն, որը օժտված է հոգևոր աստիճանով: Դա Լուսիգ սարկավագն է: Սակայն և այսպեղ կազմողը իրեն չի անվանում որպես թարգմանիչ՝ հռչակելով իր հեղինակության մասին, այլ վերստին անվանում է իրեն *yazučï, գրիչ* “դիր”:

Arm. 13 ձեռագրի հայկական հավելագրերը.

Գրեցաւ ձիռաւնք. անհմաստր գրչիս լուսիկ սարկաւարգիս: Երես անկեալ աղաչեմ յիշել ի տր. եւ աճ զձեզ յիշէ: (14v)

Զանարժան գրիչս սորա զլուսիկ սարկաւարգն. յիշեսցիք ի տր եւ աճ զքեզ յիշէ: (62r)

Զանարժան գրիչս զլուսիկն աղաչեմ յիշել ի տր: (87r)

Զմեղաստարտ եւ զանարժան գրիչս զլուսիկ սարկաւարգն. աղաչեմ յիշել ի տր աճ զձեզ Զյիշէ: (113r)

ՏՐ յս դու ողորմես. զգրչիս գրօցն դու յիշես, եւ թողորթ մեղաց շնորհես, դասուցի դասս պասկես. զլուսիկ անուն փամար յիշես ձեռքս փղի գիրս մնա, եւ մարունս ի հող դարնա: եւ անուն իմ յտր մնա:

Թվ յիշ: ավարտեցաւ: (94r)

Arm. 13 ձեռագրի դիզախերեն հավելագրերը

Yazdirgan sarnagan bilä birlängäylär yazučï blä da aňilgaylar Teňri alnina meňi uçmaχina, amen. Tvagan 1029 (21v)«Թող միա-

նանան գիր հանձնարարողը և ընթերցողը գրչի հետ միասին և թող Ասրծու մոտ հիշարակվեն հավերժ դրախտում, ամեն: 1580 թիվ»:

Yazixli Lusig sargawakni anğaysen, neçä sarnasaj, bir "Atamiz, ki köktäsen" bilä (58v) «Ամեն անգամ ընթերցելով, հիշի մեղսագործ Լուսիգ սակավարգին մեկ «Հայր Մեր»-ով»:

Men, Lusig sargawak, yazdim, sarnagan yazuçi bilä anilgay K'risdosnuj alnina (119v) «Գրի եմ արել ես, Լուսիգ սարկավագս, և թող հիշարակվի կարդացողը գրչի հետ միասին Քրիստոսի առաջ»:

Yazdirgan sarnagan bilä yazuçi bilä birlängäy, K'risdosnuj yaryu künninä anilgaylar bir yerdä (186v) «Թող միանանան կարդացողը գրչի հետ միասին և թող հիշարակվեն միասին Քրիստոսի առաջ վերջին դարաստանի օրը»:

1581 թվականի N 359 Վենետիկի ձեռագրում, համոզվելով, հավանաբար, որ թարգմանության նոր խմբագրությունը, ընդհանուր առմամբ, հաջողակ է Լուսիգ սարկավագը որոշում է վերջապես հայտարարել իր հեղինակության մասին, բայց ոչ ուղղակի, այլ համեստորեն գանգաղվելով, որ թարգմանությունը փրվել է իրեն մեծ դժվարությամբ և, իբրև, դա այն է, ինչ նրա ուժի սահմաններում է:

Բառացիորեն.

Yalbarip xolarmen sizdän, çardaşlar, ki neçä bu bitikni sarnasajiz, anğaysiz men yazixli Lusig sargawakni bir hajr mer bilä, da Krisdos sizni dä anğay kendiniñ ekinçi kelganinä, da boşatkay yazixlarinijzga, da arzani etkäy köktagi çanlıçka meñi meñilik amen (38v-39) «Աղաչում և խնդրում եմ ձեզ, եղբայրներ, այս գիրքը ընթերցելով, ամեն անգամ հիշեք ինձ, մեղսագործ Լուսիգ սակավարգիս, մեկ «Հայր Մեր»-ով, և Քրիստոսը կհիշե Ձեզ իր երկրորդ գալուստի ժամին, և կների ձեզ ձեր մեղքերը, և երկնային արքայություն կարժանացնի ձեզ հավիտեանս հավիտենից, ամեն»:

köp çiyin bilä çixardix çipçax tilinä ermeni saymosnu, yamanlamañiz, zerä çudratimiz bunça edi, artixin Krisdos tügällägäy (124r) «Մեծ դժվարություններով մենք թարգմանել ենք խփչախերեն լեզվով հայկական Սաղմոսագիրքը՝ չվարաբանեք, քանի որ մեր ուժերը հերիք արեցին միայն այսքանի համար, իսկ մնացածը թող Քրիստոսը լրացնի:»

Զ.Դուրինսկան, համեմատելով հավելագրերը, ժամանակին ենթադրել է, որ գոյություն ունեին երկու «անհապական» խփչախական թարգմանություն. «անանուն»՝ 1575 թվականի 3546/III ձեռագիրը և Լուսիգ սարգավագի՝ 1580 թվականի, Վիենայի Arm. 13-ը [Dubin'ska 1961: 212]: Սակայն, մենք հակված ենք եզրակացնելու, որ հետագա մեկնակերպերի թարգմանիչն ու խմբագիրը եղել է մի անձ՝ Լուսիգը, որը 1580 թվականի մոտ, հասնելով նշանավոր հաջողությունների՝ հնագրագիտության, Աստվածաշնչի, գրաբարի, հին եբրայերենի, հունարենի, լատիներենի, լեհերենի ուսումնասիրման և թարգմանության արվեստի

ուղորդներում և սրանալով այդ ժամանակ սարկավագի ոչ բարձր, բայց պարզավոր հոգևոր ասպիճանը:

Սաղմոսագրքի մեջ ներառված բազմակի սաղմոսները, աղոթքները, երգերը և հիմները, գոյություն ունեն նաև հայ-խիչախական աղոթագրքերում: Շար հաճախ գրիչները չէին սահմանափակվում բառացի պարճենավորմամբ, սակայն ջանում էին բարելավել և ուղղել թարգմանությունը: Երբեմն, այդ ժամանակ, ի հայտ էին գալիս բոլորովին նոր թարգմանություններ: Ապագայում մենք ծրագրում ենք հրատարակել Սաղմոսագրքի այլ մեկնակերպերի փարբերակները, իսկ առանձին հարորով՝ բոլոր փարբերակներով արձանագրված աղոթագրքերի փեքսպերը:

Սույն աշխատության մեջ հրատարակվում են՝ 3546/III – Arm 13 ձեռագրերի հայ-խիչախական Սաղմոսագրքի երկու առավել վաղ մեկնակերպերը: Նրանք երկուսն էլ երկլեզվանի են, այն ժամանակ երբ մնացած ցուցակները արդեն չեն պարունակում հայկական փեքսպի բնօրինակը:

Երկու մեկնակերպերի հայկական մասերը փեքսպի առումով իրարից չեն փարբերվում, եթե ուշադրություն չդարձնենք երկրորդ մեկնակերպի մեջ առկա ուղղագրական որոշ յուրահատկությունների, փոքրաթիվ կրճատումների և վանկաչափական նշագրումների վրա: Երկուսն էլ, համապատասխան փեղերում, պարունակում են՝ Հին Կրակարանի փարբեր գրքերից երգեր, աղոթքներ և հիմներ: Սակայն 1580 թվականի ձեռագիրը, նախորդի համեմատությամբ, ներառում է նաև N 151 սաղմոսը, Ազարիայի և երեք պարանիների աղոթքը, ինչպես նաև Նոր Կրակարանից որոշ փեքսպեր, որոնք առաջին մեկնակերպում չկան: Ընդհանուր առմամբ, հայկական փեքսպը նույնանման է Յ.Զոհրապետանի դավանական հանրագումարային փեքսպի հետ:

Սույն աշխատությունում հրատարակվող երրորդ նյութը՝ դա Մեսրոպ Մաշտոցի անվան Մաքենադարանի N 2267 ձեռագրի Սաղմոսագրքի բառարանն է, որը գրվել է (սկսել է գրել) նույն Լուսիգ սարկավագը 1581 թվականի ապրիլի 12-ին, ինչի մասին վկայում են 43ր էջի հայերեն և խիչախերեն գրառումները: Հարկանշական է, որ 1581 թվականով թվագրվում է և Վենետիկի N 359 ձեռագիրը:

Օգրագործված աղբյուրները

I. Krakow, Czartorysky Museum, 3546/III. A Psalter with other Old Testament and Gospel Hymns, Songs and Prayers. Written and illuminated by Anonym. Lviv, 1575.-258+2 unnumbered sheets (64^a and 91^a). Language: Armenian and Qypchaq verse by verse. Script: Armenian bolorgir.

II. Vienna, Austrian National Library, Arm. 13. A Psalter with other Old Testament and Gospel Hymns, Songs and Prayers. Written and illuminated by deacon Lussig. Lviv, 1580.— 2 unnum-

bered sheets+210 sheets (without end)+1 blank sheet,. Language: Armenian and Qypchaq verse by verse. Script: Armenian bolorgir.

III. Yerevan, Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts (Matenadaran), N 2267. Deacon Lussig Collection.— Lviv, 1581-1598.— 16x20,5cm. 189 sh. Language: Armenian and Qypchaq, Polish and Ukrainian glosses. Script: Armenian bolorgir, notrgir.

Ժողովածուն ներառում է՝ հայկական բառերի պարադիգմաներ, առավելապես բայեր, ձևայթաբար խփչախերեն թարգմանությամբ (էջեր 30r-42v), Սաղմոսագրքին կից հայ-խփչախերեն բառարանը (էջեր 43r-52v), նորածին Հիսուսին՝ իմաստունների և հովիվների պաշտամունքի մասին Ավետարանի հարվածը (էջեր 112r-112v), հողված Ավետարանի մասին (էջեր 113r-113v), Երգ Քրիստոսի հարության մասին (էջեր 129r-131v), վարդապետ Վանագանի խրատը՝ երեկոյան ժամասացության արթնության, պասի և թաթախման մասին (էջ131r), երկարակեցության բալասանի դեղագիրքը (էջ130r):

Հավելագրումներ հայ-խփչախերեն բառարանից՝
Պատմութի հայի եւ իւրբչախ լեզուի. մեկնեալ՝ լուսիկ (43r):

Թվ: ոլ: սպրիլ Ժբ. Ձեռամբ լուսիկ սարկաւագի. խօլու աշրրու լուսիկ. dijakonus armenus (43r):

Հայրենեք նաև Վենեդիկի N359 ձեռագրի մասին այն սակավ տեղեկությունները, որոնք մեր տրամադրության տակ են:

Գրագրության յուրահարկությունները

Հայկական գիրը ՌԲկրահնայի հայերի կողմից օգտագործվում էր իր արևմտյան փարբերակով: Անվրեպ կարդալու համար, առաջարկում ենք օգտագործել ստորև տրված փրանսլիտերացիայի և փառադարձության աղյուսակի օգնությամբ:

Հայ-խփչախերեն լեզվի պարմա-համեմատական ուսումնասիրության ընթացքում, մենք վաղուց համոզվեցինք, որ խփչախերեն տեքստերը կարդալու համար ավանդական հայագիտական փրանսլիտերացիան, ինչպես նաև վերջինիս վրա հիմնված փառադարձությունների փարբերով փոխզիջումային փրանսլիտերացիան, քիչ օգուտ է տալիս, քանի որ այն ոչ թե միայն չի բացում խփչախերենի ձայնավոր համակարգի յուրահարկությունը, այլ նաև էապես սևագծում է բաղաձայն համակարգի առանձնահարկությունները:

Հայ-խփչախական գրաֆիկայի և հնչյունակազմության միջև և հարաբերակցությունը, մանրամասնորեն ուսումնասիրված է Ա.Գարկավեցի նախորդ աշխատություններում [Գարկավեց 1987; 1988 և այլն], որոնցից մենք և առաջարկում ենք օգուտ քաղել մեր երախտապարտ ենթերցողներին: Ուստի, այս աշխատության մեջ, խփչախական տեքստերը մենք տալիս ենք սկզբնական հայկական գրաֆիկայով և թյուրքագիտական փառադարձությամբ, ճշտելով, ըստ անհրաժեշտության, նախորդ ընթերցումները:

Հայերեն, հազվադեպ դեպքերում, խփչախերեն Կրճարում, օգտագործվում են հեփրայալ բնորոշ հայկական կրճարումները:

Շնորհակալական խոսք

Սույն հրատարակությունը հնարավոր եղավ իրականացնել մի շարք կրոնական, գիտական, հասարակական կազմակերպությունների ինչպես նաև դիվանագիտական ներկայացուցչությունների (հավատարմագրված ինչպես Ղազախստանի Հանրապետությունում, այնպես էլ այլ երկրներում) և առանձին անհատների սիրալիր օգնության և աջակցության շնորհիվ:

Նախ և առաջ հեղինակները հայտնում են իրենց երախտագիտությունը դր.Ռուզան Գազիկի Սարգսյանին որակյալ, ծավալուն և ծանր աշխատանքի համար՝ հայերեն գրաբարյան Կրճարի շարվածքը իրականացնելու և Լուսիգ Սարկավազի երկու ձեռագրերի մեկնակերպերի նախնական համեմատումը անցկացնելու համար:

Հնարավոր չէ շնորհակալական անկեղծ խոսքեր չիղել՝ Հ.Վահան Վարդ. Օհանեանին – Մխիթարյան Միաբանության Ընդհանուր Քարտուղար (Վենեֆիկ, Մայր եկեղեցի, Սուրբ Ղազար), Հ.Վահան Վարդ. Հովակիմեանին – Վիենայի Մխիթարյան Միաբանության Մաքենադարանապետ, Մոնս. Ներսես Տեր-Ներսեսյանին – Հայաստանում Մխիթարյան Միաբանության ներկայացուցչության ղեկավար (Գյումրի), Կլն Վիոլետր Ալեքսանյանին – ՄԱԳԱՏԵ-ի աշխատակից (Վիենա), որոնք անգնահատելի օգնություն ցուցաբերեցին՝ Լուսիգ Սարկավազի Սազմուսագրքի ձեռագրերի փրամադրման և ձեռք բերման գործում: Հեղինակները շնորհակալություն են հայտնում Նրանց Գերազանցություններ՝


Առաքելական Նունցիոս Մարիան Օլեսին, Ավստրիայի Արքակարգ և Լիազոր դեսպան Կլն Հայդեմարի Գյուրերին, Իտալիայի Հանրապետության Արքակարգ և Լիազոր դեսպան Ֆաբրիցիո Պիաջեզիին, Ֆրանսիայի Հանրապետության Արքակարգ և Լիազոր դեսպան Սերժ Սմեսովին, ԵԱՀԿ Կենտրոնի Արքակարգ և Լիազոր դեսպան Հերբերտ Զալբերին,

Ռումինիայի Գործերի Ժամանակավոր Հավատարմարար Մարին Սպենեսկուին, ՅՈՒՆԵՍԿՈ-ի Ներկայացուցիչ Կրն Խորխես Սելվեյրային,

ինչպես նաև Միջազգային հեփրագրությունների և փոխանակման Կոմիտեին (IREX- ԱՄՆ), Ավստրիայի Ազգային Գրադարանին (Վիենա), և առանձին անձանց՝ Մոնս. Վարդան Բոզոսյանին – Մխիթարյան Միաբանության ներկայացուցիչ Լափանական Ամերիկայում, Հանս վան դեռ Վելդեին-Լեյդենի Հմայսարանի արևելյան ձեռագրերի բաժանմունքի Կրն (Նիդերլանդներ), Ջեյ Սկիլենին և Սերգեյ Կարպովին – ՅՈՒՆԵՍԿՈ-ի մասնագետներ, Պետեր Շփիկին – «White and Case Limited Liability Partnership» – ընկերության ավագ իրավաբան,

Պերճ Զամչյանին-Մխիթարյան Միաբանության վեր-մասերին, Մարիա Գուրովսկային, Անապոլի Կորելյակին, Վոլոդիմիր Մոկրուն, Բոգդան Բոբերսկուն, Զիգմունդ Աբրահամովիչին, Էդվարդ Տոխյանսկուն (Լեհաստան), Լյուբով Գիսցովային, Նատալյա Յակովենկոյին, Յառուսլավ Դաշկեվիչին (Ռուսաստան), Պրոֆ. Վարդան Գրիգորյանին և Գայանե Պինգիրյանին (Հայաստան),

և բոլոր այն հիմնարկներին և ձեռնարկությունների, որոնք իրենց լուծան են ներդրել այս գրքի պատրաստման և հրատարակման գործում:



The title page of the Qypchaq Prayer book, printed in Armenian script by Jovhannes Karmadaneenc in Lviv, 1618.

Armenian abbreviations

Армянские сокращения

աձ	Աստուած	իլի	Իսրայելի
ավ	Աստուծով	իւրց	իւրեանց
աՀեալ	օրհնեալ	Հպլ	Հանապաղ
աՀեսցես	օրհնեսցես	ճպՀ	ճանապարհ
աՀեցէք	օրհնեցէք	ճպՀք	ճանապարհք
աՀեցից	օրհնեցից	մանկուէ	մանկութեան
աՀէն	օրհնէն	յաՀութի	յօրհնութիւն
աՀուէ	օրհնութեան	յամ	յամենայն
աՀութ	օրհնութեամ	յամի	յամենայնի
աՀութե	օրհնութեան	յայ	յԱստուծոյ
աՀութիւն	օրհնութիւն	յէմ	յԵրուսաղէմ
ամ	ամենայն	յիէէ	յԻսրայէլի
ամոք	ամենեքեան	յիլի	յԻսրայէլի
ամի	ամենայնի	յբս	յաւիտեանս
ամբն	ամենեքեան	յբտ	յաւիտեան
արդարուէ	արդարութեան	յբտս	յաւիտենս
ամ արչտուէ	ամ արչտութեան	յբտն	յաւիտեան
այլ	աստուծոյ	յբց	յաւիտեանց
զմ	ազում	նմ	նմա
էէմէ	Երուսաղէմէ	նենգու	նենգութեամ
զաՀութի	զօրհնութիւն	նոց	նոցա
զամ	զամենայն	նոք	նոքա
զարուի	զարութիւն	նս	նոսա
զէմ	զԵրուսաղէմ	նր	նորա
զճպՀս	զճանապարհս	նց	նոցա
զթգրն	զթագաւորն	նք	նոքա
զիէլ	զԻսրայէլ	նմէ	նմանէ
զս ս	զսուր ս	ոպ	որպէս
զս ն	զսուր ն	ուէ	ութեան
զտր	զՏէր	ուի	ութիւն
զնս	զնոսա	ու	ութեամ
էմ	Երուսաղէմ	ս	սուր
էմի	Երուսաղէմի	ս ք	սուր ք
ըս	ըստ	ս ս	սուր ս
թգրք	թագաւորք	վս	վասն
թեց	թեանց	վը	վերայ
թի	թիւն	վրկացու	վերակացու
թիս	թիւս	տէ	Տեառնէ
թիք	թիւք	ան	Տեառն, Տեառնք
թ	թեամ	տը	Տէր
թգր	թագաւոր	քաՀ	քաՀանայ
թէ	թեան	ՔՍ	Քրիստոս
իէլ	Իսրայէլ	քս	Քրիստոս

Transliteration, transcription and digital value of the Armenian characters in Armeno-Qypchaq monuments

Транслитерация, транскрипция и цифровое значение армянских букв в армяно-кыпчакских памятниках

Ա	u	aib	a, ä, â	аиб	а, ә, я	1
Բ		pen	p	пен	п	2
Գ	q	kim	k	ким	к	3
Դ	q	ta	t	та	т	4
Ե	t	yech	e, y-	йечь	е, й-	5
Զ	q	za	z	за	з	6
Է	t	e	ē	э	е	7
Ը	p	ət	ī (ə), i	ыт	ы, і	8
Թ	θ	to	t'	то	т	9
Ժ	θ	zhe	ž	же	ж	10
Ի	h	ini	i, ĭ	ини	і, ы	20
Լ	L	lyun	l	люн	л	30
Խ	h	khe	χ	хе	х	40
Ծ	θ	dza	dʒ	дза	дз	50
Կ	h	gyun	g	гюн	г	60
Հ	z	ho	h	хо	h	70
Ձ	z	tsa	c	ца	ц	80
Ղ	q	ghad	γ	ғад	ғ	90
Ճ	z	dzhe	dʒ	дже	ж	100
Մ	u'	men	m	мен	м	200
Յ	J	hi	j	хи	й, -	300
Ն	u	nu	n	ну	н	400
Շ	z	sha	š	ша	ш	500
Ո	u	wo	o, ö	уо	о, ө	600
Չ	z	cha	č	ча	ч	700
Պ	u	be	b	бе	б	800
Ջ	z	dche	č	дче	ч	900
Ռ	u	ra	r	ра	р	1000
Ս	u	se	s	се	с	2000
Վ	u	vev	v	вев	в	3000
Տ	u	dyun	d	дюн	д	4000
Ր	u	re	r	ре	р	5000
Ց	g	tso	ç	цо	ц	6000
Ի	u	hyun	w	һюн	у, ү, в	7000
Փ	h	pyur	p'	пюр	п	8000
Կ	p	ke	k'	ке	к'	9000
Օ	o	o	o, ö	о	о, ө	
Ֆ	φ	fe	f	фе	ф	

Transliteration and transcription of the Armenian character combinations

Транслитерация и транскрипция
армянских буквосочетаний

<i>աւ</i>	aw, o	аў, ав
<i>աա</i>	ya, (y)ă, â, 'a	йа, (й)ă, 'а, я
<i>եե</i>	yē, 'ē	йе, 'е
<i>եւ/և</i>	yew	йев
<i>եօ</i>	yo, yö	йө, ө
<i>իւ=իվ</i>	iv	ів
<i>իւ=իու</i>	yu, yü, ü	йу, йү, ү
<i>եւ=իւ</i>	yu, yü, ü	йу, йү, ү
<i>նկ</i>	nk, ŋ	нк, н̣
<i>նղ</i>	ng, ŋ	нг, н̣
<i>նք</i>	nk', ŋ	нк, н̣
<i>ու</i>	u, ü	у, ү

ACKNOWLEDGEMENTS

The given publication was not possible without the kind help and assistance of a lot of religious, scientific, public organizations, diplomatic representations and separate persons.

First of all, the authors express deep gratitude to Dr. Ruzan G. Sarkissian – for qualified, volumetric and heavy work on a set of the Armenian text on Grabar (Old Armenian) and primary verification of the texts of the manuscripts of two versions of Psalter of Lussig the sarkavag.

We say our sincere thankful words and appreciation to:

Father Vaban Vardapet Obanean – General Secretary of the Mekhitarists Congregation (Venice, Main Church, St. Lazarus),

Father Vaban Vardapet Hovakimean – Director of the Mekhitarists Congregation Library in Venice,

Monsignor Nerses Ter-Nersesian – Head of Representation of the Mekhitarists Congregation in Armenia (Giumri),

Mrs. Violet Alexanian – Employee of headquarters of MAGATE in Vienna,

*The International Research and Exchanges Board (IREX, USA),
who have rendered the invaluable help on granting and purchase copies of the deacon Lussig's manuscripts.*

The authors will not forget kind assistance and thank for the rendered help in purchasing copies of some Armeno-Kypcbak manuscripts of Their Excellencies


Nuncio of Vatican – H.E. Apostolic Marian Oles,

Ambassador Extraordinary and Plenipotentiary of Austria Mrs. Heidemaria Gurer,

Ambassador Extraordinary and Plenipotentiary of the Italian Republic Mr. Fabricio Piagesi,

Ambassador Extraordinary and Plenipotentiary of the French

*Republic Mr. Serge Smesow,
Ambassador Extraordinary and Plenipotentiary of OSCE
Mr. Herbert Salber,
Charge d'Affaire of Romania Mr. Marin Stenescu,
The representative of UNESCO Mr. Jorge Sequeira,
And also
Austrian National Library (Vienna), France National Library (Paris),
Leiden University Library (Netherlands), Mekhitarists Congregation
Libraries in Venice and Vienna,
And separate persons
Mons. Vartan Boghossian – representative of Mekhitarists in Latin
America,
Hans van der Velde – Director of Department of Eastern Manuscripts
of the Leiden University (Netherlands),
Jack Skillen and Sergey Karpov – experts of UNESCO,
Peter Sztyk – Lawyer of the company "White and Case Limited
Liability Partnership",
Berdj Djamdjian – WEB-Master of the Congregation of Mekhitarists
in Vienna,
Maria Gutowska, Anatoly Kobeliak, Wolodymyr Mokry, Bohdan
Bobersky, Zygmunt Abrahamowicz, Edward Tryjarsky (Poland),
Liubov Ghistsova, Natalia Yakovenko, Yaroslav Dashkevych (Ukraine)
Vartan Grigorian, Gayane Pingirian (Armenia).
And
All companies and organizations which have brought in the edition
of this book.*



Krakow, Czartorysky Museum, 3546/III: 1r.




Vienna, Austrian National Library, Arm. 13: 1r.



Դօղո՞ւ Իճանկան չնոսյ
 Մարնու չկա
 Պիյինց տախուղխարու չի
 մըզ պիզիմ յն քս. խալտըր
 տը պիզկա օրինակ . սք
 էռ. խօզ շնտա քէնտինին
 քինէ դուրլու. հարզաման
 աղը շէ քայպի շ տա Պիյ
 Թէնկրիկա խուրպանըմ
 նը սունկայպի շ մաթէոս.
 մէտարանի չքա քորա .
 Հարզաման աղը շէ քինըզ
 տա ազըր շանմանը հէմ օզ
 կա էերտատա . Պար չա նէ
 մայնէտա խօշանըզ ինամ
 Կ

տա սանա հայպաթ մնէ
 մնկի լիք Ա մն .
 Պու պար շանը աղ շ ըմտան
 տա էուրա քրտուն մէնիմ
 խապու շ օր պիյի Ռնի յն
 քս տա Թէնկրի մնկի լիք
 դան աւալ էառ յ զա մանա
 էաղ ինի յ կա . տա էզ արզա
 նի սէ նինխան ըլտնտա մնի
 դօղուրու չի շար ըմպիլա տա
 քէ չի շ շար ըմպիլա . տա էու
 գու խղակի շար ըմ պիլա տա
 պար շա քէ յղան լիք պիլայ .
 տա սանա հայպաթ աղան
 պիլայ տա արիճան պիլայ
 էկէ

Հալ ի տա հար զախդ մն
 կի մնկի լիք ամն
 Աղընա Պիյ Թէնկրինին
 պաշ շանտը . տա հայպաթ ը
 նա անըն դու կան շանտը .
 խայսիքի պօրտուն հայպաթ
 արի էերորդու Թիկա մնկի
 մնկի լիք . ամն .

 Կալ մեջաւ Լ Ո Վ ի կալ
 մարանը յն Յովհանն էսին
 քարմատան Լնոյ . Թ Մ Կ Է .
 մարտի Ի :

Leiden University Library.
 The Prayer book, printed in Lviv, 1618. Pages 2, 3, 167, 168.